ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ

2023 թվականի սեպտեմբերի 17-ից 22-ը

Բելգիայի Թագավորություն (ք. Բրյուսել) գործուղման արդյունքների մասին

1. **Անունը Ազգանունը՝**

   Արամ Սայամյան, Արմեն Խաչատրյան:

2. **Զբաղեցրած պաշտոնը՝**

   ՀՀ ՊԵԿ մաքսային հսկողության վարչության ապրանքների դասակարգման և սակագնային կարգավորման բաժնի գլխավոր մաքսային տեսուչ:

3. **Գործուղման վայրը և ժամկետները՝**

   Բելգիայի Թագավորություն, ք. Բրյուսել, սեպտեմբերի 17-ից 22-ը

4" Հրավիրող կողմը՝

Համաշխարհային մաքսային կազմակերպութուն (ՀՄԿ)

5. Գործուղման նպատակը /աշխատանքային որ խնդրի լուծման համար էր նախատեսված գործուղումը/՝

ՀՄԿ ապրանքների նկարագրման և ծածկագրման ներդաշնակ համակարգի (ՆՀ) կոմիտեի հերթական՝ 72-րդ նստաշրջանի աշխատանքներին մասնակցութուն, մասնավորապես՝ նստաշրջանի օրակարգում ընդգրկված մի շարք խնդրահարույց ապրանքների (մատակարարող ռոբոտներ, ռադիոհաճախականության գեներատորներ, տարատեսակ սննդային ապրանքներ, քաղցրավենիք, կերային հավելումներ և այլն) դասակարգման, ինչպես նաև ՆՀ մի շարք դիրքերի, ենթադիրքերի պարզաբանումների հնարավոր փոփոխությունների քննարկումներին մասնակցություն և քվեարկություն՝ հաշվի առնելով, որ ապրանքների դասակարգման ՆՀ կոմիտեում ընդունված որոշումները դրանց ՀՄԿ չիրազեկման դեպքում ենթակա են կիրառման ՀՀ-ում:

6" Քննարկված թեմաները՝

Օրակարգում ընդգրկված մի շարք ապրանքների դասակարգման հիմնահարցերի, ՆՀ պարզաբանումների ինչպես նաև ՆՀ ռազմավարական զարգացման հիմնահարցերի քննարկում:

7" Հանդիպումները, ելույթները, բարձրացված կամ քննարկված հարցերը՝

Օրակարգում ընդգրկված խնդրահարույց մի շարք ապրանքների դասակարգման քննարկումներին մասնակցություն, ինչպես նաև քվեարկությանը մասնակցություն:

8" Հանդիպման կամ հավաքի ժամանակ ընդունված որոշումները, պայմանավորվածությունները, ստորագրված փաստաթղթերը՝

Քվեարկության արդյունքում մի շարք ապրանքների վերաբերյալ դասակարգման որոշումների ընդունում, որոնք վերջնական կհաստատվեն հերթական՝ 73-րդ նստաշրջանում, ՆՀ ռազմավարական փոփոխությունների՝ այդ թվում պարզաբանումներում մի շարք փոփոխությունների շարունակական աշխատանքների շուրջ պայմանավորվածություն, որոնք կոչված են հնարավորինս համապատասխանեցնել ՆՀ-ն առևտրաշրջանառության միտումներին և պարզեցնել ՆՀ օգտագործումը:

9" Առաջարկությունները, դրանց ընթացք տալու վերաբերյալ առաջարկները՝ եղանակը, ձևը, ժամկետները, պատասխանատուները, ակնկալվող արդյունքները՝

ՆՀ կոմիտեի 72-րդ նստաշրջանում ընդունված որոշումներն անմիջական անդրադառնալու են ՆՀ, ԱՊՀ ԱՏԳ ԱԱ և այնուհետ՝ ԵԱՏՄ ԱՏԳ ԱԱ-ի փոփոխության և կիրառման տեսանկյունից՝ հաշվի առնելով, որ ՆՀ-ը հանդիսանում է դրանց սկզբնաղբյուրը: ՆՀ կոմիտեում ընդունված որոշումները ենթակա են կիրառման ՆՀ պայմանավորվող կողմերի՝ այդ թվում ՀՀ-ում, ուստի ՆՀ կոմիտեի նստաշրջանների աշխատանքներին ՀՀ մասնակցությունը շատ կարևոր է՝ հաշվի առնելով, որ ՆՀ կոմիտեում են ձևավորվում ապրանքների դասակարգման մոտեցումների, որոնք հետագայում տեղ են գտնում արդեն ազգային անվանացանկերում:

10" Ստորագրությունը, ամսաթիվը՝

Արամ Սայամյան՝

Արմեն Խաչատրյան՝

25.09.2023թ.